# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 2017թ. նոյեմբերի 20-22-ը Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոն գործուղման արդյունքների մասին

**1.Անունը, ազգանունը**

Արթուր Նալբանդյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ Լոռու մարզպետ

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոն, Ֆրանսիայի Հանրապետություն, 2017թ. նոյեմբերի 20-22-ը:

**4. Հրավիրող կողմը**

Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնի նախագահ Ռենո ՄՅՈՒԶԵԼԻԵ

**5. Գործուղման նպատակը**

ՀՀ Լոռու մարզի և ՖՀ ՊԱԿԱ ռեգիոնի միջև հետագա համագործակցության քննարկում

**6. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը**

Նոյեմբերի 20-ին տեղի ունեցավ հանդիպում ռեգիոնալ խորհրդի նախագահի հետ: Ֆրանսիական կողմից հանդիպմանը մասնակցեցին՝ ռեգիոնալ խորհրդի նախագահի տեղակալ միջազգային հարցերով տիկին Կարոլին Պոզմանտիեն, Եվրամիջերկրական հանձնաժողովի նախագահ տիկին Ագնես Ռամպալը, միջազգային կապերի դեպարտամենտի ղեկավար պարոն Ժան-Իվ Աստրյուկը: Քննարկվեցին համագործակցության ծրագրերը և հեռանկարները:

Պրովանս Ալպեր Լազուրե ափ ռեգիոնալ խորհրդի նախագահ պարոն Ռենո ՄՅՈՒԶԵԼԻԵՆ առաջարկեց համագործակցության արդեն հաստատված երեք ուղղություններին, մասնավորապես՝ պատմական տուրիզմի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաների և ՏՏ ոլորտի զարգացում և ձեռնարկությունների միջազգայնություն, ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում և ակտիվ մասնակցություն շրջակա միջավայրի պահպանման ոլորտում: Մեր կողմից առաջարկությունը ընդունվեց:

Նույն օրը կայացավ կլոր սեղան 20 երկրների մասնակցությամբ, որտեղ մարզպետ Ա.Նալբանդյանը հանդես եկավ ելույթով՝ թե երկու մարզերի համագործակցության վերաբերյալ, թե Լոռու մարզում առկա բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

Նոյեմբերի 21-ին կայացավ ֆորում «Միջերկրականի ապագան» խորագրով: Ֆորումին մասնակցում էին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Լյո Դրիոնը, Մոնակոյի Արքայազն Ալբերտ 2-րդը:

Այս բոլոր միջոցառումներին մարզի պատվիրակության հետ մասնակցում էր Մարսելում ՀՀ հյուպատոս Ռուբեն Խարազյանը:

**7. Այցի ընթացքում ստորագրված փաստաթղթերը**

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել

**8. Ձեռք բերված պայմանավորվածություններ**

Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը ՊԱԿԱ-ի ռեգիոնալ խորհրդի նախագահ Ռենո ՄՅՈՒԶԵԼԻԵՆ հրավիրել է 2018թ. այցելելու Լոռի, ՀՀ Լոռու մարզի և Պրովանս Ալպեր Լազուրե ափ ռեգիոնի միջև 2008թ. հունիսին կնքված համագործակցության շրջանակային պայմանագրի շրջանակներում կնքելու՝ 2018-2020թթ. համագործակցության հաջորդ համաձայնագիրը:

**Արթուր Նալբանդյան**, ՀՀ Լոռու մարզպետ

27.11.2017թ.